ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.03.2018թ. հ.Ե-1/198 գրության, տեղեկացվում է.

Մանանդյան փողոցի հ.9 հասցեում գտնվող բժշկական կենտրոնում նախատեսված քաղաքաշինական գործունեության ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) Երևանի քաղաքապետարանի կողմից ձևակերպվել է դեռևս 27.12.2016թ. N 01/19-16/86704-555, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության կողմից 19.03.2015թ. ընդունված թիվ 596-Ն որոշման N 1 Հավելվածով հաստատված կարգի VII բաժնի 138-177 կետերով սահմանված պահանջները: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքաշինության գործունեության բնագավառում վերահսկողություն իրականացնելու լիազորությունը վերապահված է ՀՀ քաղաքաշինական պետական տեսչությանը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում Երևան համայնքը, չունի այդպիսի լիազորություններ, թե շինարարական աշխատանքների իրականացման և թե ավարտական ակտի ձևակերպման փուլում չի իրականացնում ու չի կարող իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերի ու կառուցված օբյեկտի վիճակին վերաբերող ուսումնասիրություններ և/կամ ստուգումներ: Ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման համար, համաձայն վերը նշված իրավական ակտի պահանջների, կառուցապատողները նախ և առաջ պետք է ձևավորեն ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով և հանձնաժողովի բոլոր անդամների դրական եզրակացության (մասնավորապես՝ ընդունող հանձնաժողովի ակտ ստորագրելու) պարագայում տեղական ինքնակառավարման մարմինը ձևակերպում է միաժամանակ տրվող համապատասխան ավարտական ակտը և շահագործման թույլտվությունը: Համաձայնեցված նախագծով նախատեսված են ավտոկայանատեղիի կազմակերպում և բարեկարգման աշխատանքներ՝ կանաչապատ հատվածամասերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ